

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱԽԱՐԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏ.

Ը.

Անցնալ 1912 թ. օգոստոսի 15-ին Դիլիջան ամառանոցից վերադարձալ էջմիածին և երեկոյեան ուշ իմացայ որ իմ անունով հեռագիր կայ ստացուած: Հեռագիրն ուղարկուած էր Բորժումից Շվեցարիացի Վերերի ստորադրութեամբ և ունէր այս բովանդակութիւնը. «Շվեցարական և գերմանական գիտական արշաւախմբի մի մասը մտադիր է բարձրանալ Արարատ, յիշելով Ձեր Արարատ բարձրանալու ցանկութիւնը խոնարհաբար խնդրում եմ հեռագրեղէք Անի կայարան պրոֆեսոր Ռիկկին Ձեր համաձայնութեան մասին և բարի եղէք աջակցելու արշաւախմբին»:

Ժամի 7-ին էջմիածնի փոստատունը կողպում են, ալ ևս հեռագիրներ չեն ընդունում, վախենում էի չկարողանամ պր. Ռիկկին յայտնել իմ պատասխանը: Սակայն ամենից առաջ անհրաժեշտ էր ստանալ Նորին Սրբութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի թոյլտութիւնը: Նորին Սրբութիւնը դժուարանում էր թոյլ տալ ի նկատի ունենալով Արարատի վերելքի դժուարութիւնները և վտանգը, սակայն շուտով համաձայնուեց:

Այնուհետև առաջին գործա եղաւ, թէև անժամանակ, հեռագրի պատասխանն ուղարկել Անի կայարանը, կոչկակար հրաւիրել և դամեր դարկած մի զոյգ կոչիկ յարմարեցնել լեռ բարձրանալու համար բացի, այդ պէտք էր թեթև զգեստների պատրաստութիւն տեսնել են:

Հետևեալ օրը ամսիա 16-ին ժամի 5-ին պր. Ռիկկիից հեռագիր ստացայ թի մեր հանդիպումը կարող է տեղի ունենալ 3 ժամ 20 րոպէում էջմիածնի կայարանում: Օր չէր նշանակուած: Շտապեցի հեռագրատուն և հարցումներ ուղղեցի էջմիածնի կայարան և երևան ճանապարհորդների տեղը հաստատապէս իմանալու: Հեռագրատան պաշտօնէի սիրայօժար կատարած աշխատանքը անցաւ ապարդիւն, ոչինչ չիմացայ, որոշեցի ուղղակի գնալ Ղաճարլու կառքով քանի որ երկաթուղու ժամանակ չկար: Արագ կերպով պատրաստուեցի և երեկոյեան ժամի 9-ին ճանապարհուեցի երևան:

Հաստատապէս չգիտէի թէ ճանապարհորդները ինչ ճանապարհով են լեռը բարձրանալու. արդեօք Բզդիրի կողմից, թէ Սարգար Բուլաղից: Պր. Ռիկլիի հետագիրը շատ անորոշ էր: Գիշերով երեւանում հաւաստիացայ, որ քաղաքի հիւրանոցներում օտարականներ չկան, ուստի ժամի 12-ին կառքով շարունակեցի ճանապարհս և գիշերուայ 3-ին հասայ Ղամարլու:

Գիշերով, անժամանակ և անապասելի հայ գիւղերում պատահած անձը կարող է հասկանալ թէ ինչ ծանր կացութեան առաջ էի դնւում: Հիւրանոց չկայ. գիւղում ճրագները մարած են, անցուղարձը դատարած, ստիպուած ծանօթի կամ անծանօթ մի դուռ պիտի ծեծէք և շների սոսկալի հաջոցի և յարձակումների ենթարկուելով, արթնացնէք տան ըստ անդամներին, ծծկեր երեխայից սկսած և գիշերելու տեղ խնդրէք:

Ղամարլուի տէր Վարդան քահանայի նահապետական տունը սուրբ է այդպիսի անհանգստութիւնների և որքան ևս նեղւում էի իմ պատճառած անհանգստութիւնից, տան անդամները իրենց վերաբերմունքով և վարմունքով դիւրացրին իմ կացութիւնը: Թէև շատ էի յողնած և քնել կուգե՞նայի, խնդրեցի ժամի 5-ին անպատճառ ինձ արթնացնել և որոնել օտարականներին:

Նշանակուած ժամից առաջ ինքս արթուն և պատրաստ էի, սակայն ինձ լուր բերին թէ գերմանացիք չեն եկել և թէ այդ երեկոյեան պիտի տեղ հասնեն: Տեղական ստիկանութիւնը և երկաթուղու վարչութիւնը, նահանգապետից հրահանգուած, հիւրերին պատշաճաւոր ընդունելու և ամեն դիւրութիւններ մատուցանելու, հաստատապէս գիտէին, որ նոքա Ղամարլու են հասնելու երեկոյեան 6 ժամի գնացքով:

Օրս անօգուտ շանցնելու դիտաւորութեամբ, այցելեցի ետք Վիրապի վանքը: Էջմիածինը վարդապետ չունի ինք Վիրապում, վանքը կառավարում են երեք հոգաբարձու և մի քահանայ, որոնք վանք գալիս են միայն կիրակի և տօն օրերը, ուխտաւորների այցելութեան ժամանակ: Պատմական յիշողութիւններով այնքան հարուստ վանքը, Լուսաւորչի շարշարանաց վայրը, միջնադարեան հայ գրականութեան և մտաւորական կեանքի կենդրոններից մէկը, կառուցուած երասխի ձախ ափի ընդարձակ դաշտավայրում առանձնակի բարձրացող միակ բլրի վրայ, այժմ լքուած և ամայի է: Բաւական բարձր բլուրը, համարեա ամբողջութեամբ վանքի սեպհականութիւն, բաղկացած է սև և կարմիր գոյնի մարմարիտից, գունաւոր հարուստ երակներով: Առ այժմ այդ հարուստ հանքից օգտուում են միայն կիր պատրաստելով, իսկ Տփխիսի ճոխ տները, ինչպէս նաև գերեզմանները զարդարւում են արտասահմանի և Ռուսաստանի խորքերի թանգարժէք քարերով: Պատմում էին որ այդ-

տեղ նստեց ցեմենտի հանք կայ և որ իբր թէ մի ընկերութիւն է կազմուել շահագործելու այդ հանքը: Երկաթուղու կայարանից երկու ժամ տարածութեամբ այդ հանքը, կարող է իրաւամբ մեծ ապագայ ունենալ:

Վանքի կառավարելու ներկայ եղանակի մասին այս պիտի նկատեմ, որ հողաբարձութիւնը լաւ գործ է կատարել նորոգելով և կահաւորելով ուխտաւորների և վանահայրական սենեակները, բայց շատ վատ է արել ծեփելով երկու Վիրապների ներքի կոպիտ քարերով շարուած և գարերից ի վեր առանց ծեփի թողնուած պատերը, նամանաւանդ երբ իրեն թոյլ է տուել վանքի յատակի սալ քարերը փոխարինել այլանդակ տամետով, իսկ սեղանի աստիճանները և պատը այլանդակել են իւղաներկ կեղծ մարմարիոնի նմանութեամբ:

Վանքի անմիջական զրացիները թուրքեր են, վերջի թուրք հայկական ընդհարման ժամանակ վանահայրը երկիւղից թողել փախել էր, և այդ թուրքերը անտէր թողնուած շինութեան մէջ մըտնելով, հարաւային և հիւսիսային պատերում ամրացրած երկու զեղաքանդակ քարերը ջարդոտել են և փնասել: Այդ զարդաքարերը, անշուշտ աւելի հին են քան շինութիւնից, հաւանական ժ. Գ. դարու գործ է, հին եկեղեցուց են նորի մէջ ամրացրած և ներկայացնում են աւետարանների սկսուածքներում սովորաբար հանդիպող կանացի գլխով թռչնազարդ խորանազարդերը: Հայկական հարստարուելուի ծաղկեալ շրջանի մնացորդներ են դժբա. մինչդեռ եկեղեցու շէնքը ժ. է. դարուց է և արուեստի կողմից առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում:

Թուրք գիւղերից յետոյ ամենամօտի հայ գիւղը Իււփան է, Երեւանեան դաշտի բրուտների գիւղը, որի բոլոր բնակիչները բրուտներ են: Նոքա ունեն քաւականաչափ հող, քաջածանօթ են իբրեւ աշխատասէր հողագործներ, բայց և ընտիր բրուտներ են: Նոցա պատրաստած խեցեղէն անօթները, սկսած ամենափոքր ափսէներից, և կուլաներից մինչև վիթխարի կարասները, գործածութեան մէջ են Երեւանի նահանգում և տարածուած են ամենուրեք: Կարասները, համեմատ պահանջի, կարողանում են ամենամեծ տեսակի պատրաստել, մեծ յաջողութեամբ մրցելով տակառագործների հետ, սակայն անօթների ձևերը և պատրաստելու եղանակը ըստ ամենայնի պահուած են նախապատմականը: Երանի թէ զանուէին անձնուէր և հմուտ արհեստաւորներ և նոցա ծանօթացնէին նորագոյն ձևերի հետ:

Ինձ ուղեկցող քահանայի ասելով, այդ գիւղը օրինակելի է իւր աշխատասիրութեամբ, իւր նահապետական քարք ու վարքով, մինչև նոյն ժամանակ իւր անուսումնասիրութեամբ:

թ.

Ժամի 4-ին վերադարձայ Ղամարլու և մի փոքր հանգստանալուց յետոյ, շտապեցի վակդալ:

Եւրոպական արշաւախումբը, շվեդարեւացիներին և դերմանացիներին քաղկացած, թուով 31 հոգի վարձել էր երկու վագօն, որ մըշտապէս պահում էր իւր տրամադրութեան տակ, գործածելով քաղաքներում և մանաւանդ Ղամարլուի պէս տեղերում իրրե ննջարան: Արշաւախմբի մէջ կար մի հայուհի, օր. Հայկանդուխտ Չախմախչեան Աղէքսանդրապօլցի: Գիտական արշաւախմբին մասնակցում էին բուսաբաններ, քիմիկոսներ, բժիշկներ մի գինւորական, մի պատար, կային երիտասարդ ուսանողներ, երկու խմբագիր, 60 — 70 տարեկան ծերունիներ: Նոցա մեծ մասը ճանապարհորդում էին գիտական լուրջ նպատակով, կային այնպիսիները, որոնց նպատակն էր ճանապարհորդելով ծանօթանալ նոր երկիրների, ժողովուրդների հետ և վայելել այն մեծ վայելչանքը, որ կապուած է ճանապարհորդութեան հետ:

Արշաւախմբի ղեկավարը, Նիւրիխի պրոֆեսոր Ռիկկի, ծանօթացաւ հետս և ծանօթացրեց ամենքին: Անմիջապէս սկսեցին միջոցներ մտածել հետեւալ օրուայ ճանապարհորդութեան մասին: Նահանգապետի կարգադրութեամբ նոցա ուղեկցում էին երկու պաշտօնական և տեղական պրիստաւը անմիջապէս ևկաւ նոցա ընդառաջ: Վերջինս պիտի հոգար կառքերի և ձիերի մասին:

Երեկոյեան ուշ մի քան պարզուեց ինձ համար, որ Արարատ բարձրանալու համար անհրաժեշտ է նախապէս սահմանադա՛ն զօրքի հրամանատարից յատուկ թոյլտուութիւն, այլապէս Սարգար Բուլաղի սահմանադա՛ն գինւորները չեն թոյլ տալ լեռը բարձրանալու, որովհետեւ, ինչպէս յետոյ պարզուեց, Սարգար Բուլաղից անմիջապէս սկսւում են պարօից և տաճկաց սահմանները:

Ինձ հետ, իմ յորդորանքով, միացել էր տէր Վարդան քահանայի Սենեքերիմ որդին, նորան ուղարկեցի սահմանադա՛ն սպայի մօտ. նա իւր կողմից զլացել էր ինձ այդ արտօնութիւնը տալու, բայց համաձայնուել էր իմ հաշւով հեռագիր ուղարկել Երևան, ընդհանուր հրամանատարին: Այդ հանգամանքը իմ տրամադրութեան վրայ շատ վատ ազդեց, կարծես առաջին գիշերուայ կրած նեղութիւնները բաւական չէին: Սակայն ես կանգ չառայ, այլ խնդրեցի թոյլտուութիւնը ուղարկել, երբ Երևանից հեռագրիս պատասխանը կատացուի:

Առաւօտը, ամսի 18-ին, ժամի 7-ին ճանապարհ ընկանք. սկիզբը կառքերով մինչև Արալբի գիւղը, 12 վերստ Ղամարլուից հեռու,

Արաքսի աջ ափին: Գետն անցանք պարոմով, և այդ տեղից մօտ երեք ժամ, ջրի սակաւութեան պատճառով կառքերով ծանրաբեռնուած պարոմը անցնում էր մեծ դժուարութեամբ: Աւելի երկար տեղի մեր ակամայ սպասումը Արալխում, որովհետեւ Սուրմալուի պրիստաւը հետադրական կարգադրութեամբ այստեղ էր հասել ամսի 17-ի երեկոյեան և դժուարացել էր ժամանակին այդքան հոգու համար ձիեր պատրաստել: Այդտեղից Սարգար Բուլաղ հասնելու երկու ճանապարհ է տանում, 14 վերստ մինչև Ակոսի, 7 վերստ մինչև Թաքալթու և 8 վերստ մինչև Սարգար Բուլաղ, կամ Արալլիից Թաքալթու 12 վերստ և ապա Սարգար Բուլաղ:

Ձիերը բերում էին հատ հատ և ամեն զք շտապում էր մէկին տիրապետել: Չօրքի կառաւարտու մի Բզդիրցի հայ սիրայօժար կերպով իւր ձին ինձ տուաւ և ես ստացայ համեմատաբար լաւ և լաւ թամբած ձի, մինչդեռ ձիերը բնդհանուր առմամբ ամենախղճալի տալաւորութիւն էին անում:

Ժամի 1-ին մի մասը որոշեցինք ճանապարհ ընկնել, մի քանի հոգի մնացին գոմշի սայլ նստելու, կային այնպիսիներ որ ձիերի էին սպասում: Առաջին խմբով հասանք այժմ թուրքաբնակ Ակոսի գիւղը ժամի 5-ին, միւսները, սայլի վրայ նստածները, ժամի 8-ին: Այդտեղ ինչպէս նաև Արալլիում իջնանում էինք գինւորների պահակատներում:

Ձինւորները թէյ պատրաստեցին, թուրքերից բաժակը 5 կոպ. կաթ գնեցինք (—Շփեցարիացիք ռօտարների գին» ասելով բնորոշեցին կաթի թանգութիւնը, ինչ որ իրենց երկրում և, առհասարակ արտասահմանում սովորական է) և ճաշի փոխարէն ամեն մէկը կերաւ, ինչ իւր հետը բերել էր:

Կարծելով թէ ճանապարհորդները այդտեղ պիտի գիշերեն, քանի որ բոլորը տեղ չէին հասել, օգտուեցի ժամանակից հետախուզելու գինւորական պահականոցից երկու վերստաչափ հեռու հայկական հին գերեզմանատուներ, ուր վկայում էին թէ կան գեղեցիկ խաչքարեր արձանադրութիւններով: Այդ գերեզմանատուներ գտնւում է Արարատի հարաւ-արեւելեան փնջերի դառիվայրի վրայ, պատմական Ակոսի գիւղից, մօտաւորական հաշւով 4—5 վերստ աւելի ներքև: Ի նկատի ունենալով հին հայերի սովորութիւնը՝ գերեզմանների տեղ ընտրել բարձրագիւր տեղեր, դժուար է ընդունել, որ այդ Ակոսի գիւղի գերեզմանատուներ լինի, այնքան բարձրութիւնից հնում հաղիւ թէ ննջեցեալներ ներքև բերէին, այլ այդտեղ կար մի երկրորդ հայկական գիւղ, որի աւերակները կարելի է որոնել և գտնել: Արագութեամբ արտագրեցի ութ արձանադրութիւն, բաւական ճաշակով փորագրած խաչքարերից, կային և անընթեռնի դարձած և

կամ հազով ծածկուածներ: Արձանագրութեանց հնագոյնն էր 29—1454 թուից. նորագոյնը 249—1514-ից: Բոլորն էլ ըստ բովանդակութեան շատ պարզ և անպահոյճ, պարունակելով ըստ մեծի մասամբ մնումի տարեթիւր և անուներ: Քարերը միջակ մեծութեամբ են, երկուսից երկու ու կէս արշին բարձրութեամբ, հիւսկէն զարդերով և խաչերով դարդարուած: Թուրքերը այժմ հերկում են նախկին գերեզմանատուներ և, հաւանական է, շատ ժամանակ չի անցնիլ և այդ գերեզմանատուներ ևս հայկական շատ հնութիւնների պէս կանհետանայ¹⁾: Ութ արձանագրութեան տարեթիւերի մէջ ուղիղ 60 տարուայ ժամանակամիջոց կայ. անկասկած է գերեզմանատուներ անհամեմատ աւելի ընդարձակ էր և հետաքրքրական: Պատմութեան համար արձանագրութեան տուած միակ օգուտը, տեղական հայ ազգաբնակչութեան գոյութեան հաստատման փաստն է, իսկ 1840 թ. ահեղ երկրաշարժից յետոյ, երբ պատմական Ակոռի գիւղը հիմնադատակ կործանուեց, այդտեղ հայեր այլևս չեն ապրում: Թուրքական Ակոռի գիւղը նախկին հայ գիւղի դիրքից անհամեմատ աւելի ջրած է հաստատուած և ունի բաւական լայնանիստ դիրք, գեղեցիկ տեսարաններով դէպի Արաքսի հովիտը և նրա հանդիպակաց Գեղարքունեաց լեռնաշղթան:

Արեր մայր էր մտել. շտապով վերադարձայ պահականոցը, որովհետև հետուից նկատուեմ էի, որ մեզնից մի քանիսը ձի նստած ճանապարհ են ընկել: Այդ տեղի էր ունեցել պրօֆեսոր Ռիկլիի կարգադրութեամբ, որ ստիպուեմ էր, առանց սպասելու ընկերներին, շտապել հասնել Սարգար Բուլաղ, միւս առաւօտը շուտ լեռ բարձրանալու համար: Ես ևս պ. Սենեքերիմի հետ ձի նստեցինք: Բոլորը դնում էին միմիանցից անջատ և հետու Բաւական անցած

1. «..... Ք^ս Թ^ս ՁԿԳ (= 1514)».

2. «Թ^ս ՁԾԲ (= 1505) կանգնեցաւ ս^ք խաչս բարեխաւս Ա^ս ծատ....».

3. «Թ^ս ՁԽԹ (= 1500) կանգնեցաւ ս^ք խաչս բարեխաւսութիւն

Վիրապետի յիշ. ի ք^ս.

Այս արձանագրութեան մէջ Վիրապետը անուան ձեւը ուշադրութեան արժանի է, նա տեղական անուն է: Խոր Վիրապի սրբատեղու ազգեցութիւնն է:

4. «ԶԹուեմս յշ ք^ս Թ^ս ՁԽԶ (= 1497)».

5. «Զբաներդէս յշ ի ք^ս Թ^ս ՁԽԲ (= 1495)».

6. «Զմերանշէս յիշ ի ք^ս Թ^ս ՁԽԲ (= 1495)».

7. «Թ^ս ԹՃԼ (= 1481) ս^ք նշան ս^ք ունին Մկրչին եւ ծնոցն իւր

բաւարան: յիշ. Ք^ս».

8. «Ա^ս խաչս կանգնեցաւ ի բարեխաւսութիւն, հոգոյ Մկրտիչ արեղայիս, որ քանաւորեայ փոխեցաւ ի տէր Թ^ս ՁԳԷ (= 1458)».

հանդիպեցի և հողուց մի խմբի, որ վիճում էր թուրք ձիաաւերներից մէկի հետ, առանց իրար լեզու հասկանալու՝ նրա մօտեցայ, պարզուեց հետեւալը. շփեցարիացի մի ճանապարհորդ Պ. Զելիգ, 65 տմեայ ծերունի երիտասարդը, բարձրահասակ, միշտ ուրախ, սրախօս բարեսիրտ և առատաձեռն մի հետաքրքիր անձնաւորութիւն, խղճալով իրեն նստելու յանձնած խղճուկ ձին, իջել էր և ոտով էր գնում, Ձիաաւեր թուրքը օգտուելով ինքն էր ձին նստել, պ. Զելիգը ատիւղում էր նրան ևս իջնել. իսկ թուրքը, բնականաբար չէր կարողանում ըմբռնել, թէ ինչու եւրոպացին ոչ ինքն էր ձին նստում և ոչ արեւմտէն էր թողնում նստելու:

Ի խոյս ապագայ թուրքմացութիւնների պ. Աննեքերիմին թողնցի դոցա մօտ, ևս առաջ ընկայ Շուտով մութը վրայ հասաւ, ինձ հետ էր օր. Չախմախչեանը: Ասում էր որ Սարգար Բուլաղ տանող միայն մի ճանապարհ կայ: Հետեւից երևում էին քրդերի վրաններ, ոչխարի մեծ հօտեր, լուում էին շների հաջոց, բայց ոչ մի ճանապարհորդ չէր հանդիպում: Գնալով սաստկացաւ մութը և ճանապարհի ուղղութիւնը սկսեց կասկածելի թուալ, կարծում էինք թէ մոլորուել ենք: Սխալը նրանից էր, որ մեծ Արարատի հարաւային փեշերով փոխանակ դէպի արևելք, դէպի Փոքր Մասիսը գնալու, ճանապարհը գնալով չափազանց թեւում էր դէպի դաշտը, կարծես մենք նորից իջնում էինք Արալիս: Մտածում էինք արդէն կորցրած ճանապարհը որոնելու քայլեր անել, երբ հետեւից մի ձիաւոր երևաց, դա պ. Զելիգի թուրք ձիապանն էր, որ օգտուելով մթութիւնից և Զելիգի անուշադրութիւնից, իւր ձին նստած քշել էր և եկաւ մեզ հասաւ: Գնալով ճանապարհը ուղիղ էր. պահականոցների միջի հաղորդակցութեան ճանապարհը այդ էր, որ իջնում է մեծ Արարատի ստորոտից երկու գագաթների մէջտեղ ընկած բարձր լեռնադաշտի ստորոտը, և ապա նորից բարձրանում դէպի արևելահիւսիս, դէպի Փոքր Արարատը, որտեղ գտնւում է Սարգար Բուլաղը:

Կայ մի ուրիշ ճանապարհ, որ անցնում է լեռնադաշտի վրայով և ոչ ստորոտով, որ թէև կարճ է, բայց դժուարանցանելի է, մանաւանդ մեզ պէս անառաջնորդ անձանց համար այն էլ դիշեր ժամանակը:

Թաքալթուի պահականոցում գինւորները մեզ խմելու ջուր տուին, որ բերում են կամ Սարգար Բուլաղից կամ Ակոռից. աւելի մօտ ջուր չկայ: Պէտք է երևակայել թէ ջրի ինչ նեղութիւն են քաշում քրդերն ու նոցա անասունները:

Այդտեղ մեր խումբն ստուարացաւ և առանց դադար առնելու, գիշերուայ հովի պատճառով աշխուժացած ձիերով շարունակեցինք բարձրանալ դէպի մեր կէտ նպատակը: Սարգար Բուլաղում ճա-

Նապարհորդներին յատկացրել էին զինուորանոցի մի մեծ սենեակ, պատրաստած էր թէյի մեծ սամավար և յատուկ պատուէրով զինուորները բոլո՛ւ կփեցին, որ պատրաստ պիտի լինէր զիշերուայ ժամի 3-ին:

Յոգնած, ջարդուած և անքուն շաապեցինք՝ մեծ մասը փաթաթուելով զինուորական և փութնջիներում, քնել մի քանի ժամ: Ասկայն նորանոր տեղ հասնող ճանապարհորդները չէին թողնում հանգիստ քնանալ:

Ժ.

Առաւօտը շուտ բոլորը արթուն պատրաստ էին, սակայն որոշ քան որոշել չէին կարողանում, որովհետեւ բոլորը տեղ չէին հասել: Անհետացել էր պ. Զելիդի խումբը, նոցա հետ նաեւ պ. Սենեքերիմը: Աւերմալուի պրիստաւը քրդեր ուղարկեց նոցա որոնելու. ևս առանձնապէս անհանգիստ չէի, որովհետեւ գիտէի, որ Սենեքերիմին ճանաչում են տեղական քրդերը, ենթադրում էի, որ վրանաբնակները հրաւիրել են նոցա իրենց մօտ գիշերելու:

Ժամի 8-ին կորածները գտնուեցին, նոքա խելացիօրէն, չկամենալով մութ գիշերով ճանապարհորդել, քնել էին Թաքալթու պահականոցում, զինուորներից մահճակալներ և ծածկոցներ ստանալով, մինչ մենք բոլորս պառկեցինք յատակի վրայ, առանց դռնակների:

Խումբը մեծ էր. 33 հոգի, որքան էլ պր. Ռիկլին բաւական աչալուրջ հակողութիւն ունէր և հետամուտ էր բոլորին դհացնելու և որոշ կարգ ու կանոն մտցնելու, տեղի էին ունենում փոքրիկ տարածաշրջութիւններ: Օրը բաւական բնդառաջել էր, սակայն որոշ չէր թէ այդ օրը պիտի ճանապարհորդէինք դէպի Արարատ, թէ հետեւալ առաւօտը. ինչ պատրաստութեամբ և ում առաջնորդութեամբ:

Սահմանապահ զօրքի սպան մեզ ներկայացրեց Ախմէդ բէկ Շամշադինովին, սե շերքեղիան հաղած, արծաթապատ խանշալը մէջքին, մաուզեր հրացանը ուսին քառասնից անց մի քուրդի: Սպայի վկայութեամբ այդ քուրդը քառասուն անգամ արդէն Արարատ է բարձրացել և նրանից լաւագոյն առաջնորդ դժուար է գտնել: Նա չթոյլ առեց, որ Ախմէդ բէկից դատ ուրիշ քրդեր մեզ առաջնորդեն: Պայմանների հարցութեանց երեաց հետեւեալը. իւրաքանչիւր իւր բարձրացող պէտք է վարձէր մի բեռնակիր քուրդ, նորա շաւակը տալով առ առաւելն 15 ֆունտ ծանրութիւն, գիշերը ծածկուելու իրեր և ուտելիքէն, հաշուելով որ քուրդը նոյնչափ էլ իւր համար պիտի վերցնի: Իսկ ինքը առաջնորդը պահանջում էր 200 սուրի:

ճանապարհորդները արդար զայրոյթով լցուեցին. նոքա հրաժարում էին քեանակիր և՛ առաջնորդ քուրդերից, առարկելով որ նոքա ճանապարհը գիտեն և պարտաւոր են իմանալու. «Մենք ալպինիստներ ենք. պարտաւոր ենք խրաքանչիւր լեռան դադաթ բարձրանալիս, եթէ մինչև իսկ անձանօթ լինի, ինքներս դանկ ա՛մենակարճ ճանապարհը և բարձրանալ ամենաարագ կերպով»:

Ստարոսի էր քրդի պահանջը, աւելի օտարօտի, որ սպան ու պրիստաւը չէին միջամտում, մինչդեռ նոքա նշանակուած էին և պարտաւոր էին աջակցութիւն ցոյց տալու ճանապարհորդներին և չթոյլ տալու ակնյայտնի կողոպուտը: Նոքա միայն յայտնում էին, որ վտանգաւոր է լեռը բարձրանալ առանց առաջնորդի, որ իրենք այդ քայլը թոյլ տալը կդժուարանան: Շփեցարացիք սկսեցին նայել այդ պահանջի վրայ իրրե մի տեսակ հարկի վրայ, որ պիտի վճարեն իրենց կեանքի առաջնորդ քրդից և նրա մարդկանցից անփորձ և անվտանգ մնալու համար: Նոցանից երիտասարդները վրդովուած կամենում էին հրացաններ ձեռք բերել ինքնապաշտպանութեան համար և շօգտուել քրդերի առաջնորդութիւնից: Ես գոհ էի, որ այդքան Եւրոպացի անձամբ համոզւում էր, թէ ինչ գերում են քրդերը:

Ի վերջոյ համաձայնուեցին սակարկութեան մօտեւ, քուրդը զիջաւ մի հարիւր ուերլու, սակայն ինձ անյայտ պատճառով, ճանապարհուելուց մի փոքր առաջ յայտնեցին, որ քուրդը պահանջում է 150 ո., և որ արդէն խոստացուել է:

Քրդերի առաջարկած ծրագիրը այսպէս էր. առաջի օրը ճանապարհորդները պէտք է բարձրանան և գիշերեն լեռան փեշերին, ձեան սահմանից հեռու, երկրորդ օրը կգիշերեն աւելի բարձր տեղ, ձեան սահմանին մօտ, իսկ երրորդ օրը առաւօտը կանուխ արթնանալով պէտք է բարձրանան դադաթը և կըվերադառնան առաջուայ կայարանը, չորրորդ օրը կհասնեն Սարդար Բուլաղ: Մինչդեռ Շփեցարացիք իրենց ծրագրի մէջ Արարատ բարձրանալու համար ընդամենը յատկացրել էին երկու օր, օգոստոսի 19 և 20-ը: Առաջի օրը համարեա կորած էր, ժամի ցերեկուայ 2-ն էր, երբ վերջացրին բանակցութիւնները, պայմանաւորուելով առաջնորդին տալ 150 ո., պարտաւորեցնելով ժամանակի և անցնելիք տարածութեան նկատմամբ ենթարկուել իրենց՝ լեռ բարձրացողներին, իսկ քեանակիրներ ամենեկին շփեցնել: Որոշուեց ուղիղ ժամի 3-ին ճանապարհ ընկնել. ընդամենը 19 հօդի, գոցա մէջ օր. 2 ախմախշեանը, ու. Սենեքերիմը և ես:

Բորչչը և մեծ սամովարը պատրաստ էր ալպինիստներին գնալուց առաջ կազդուրելու: Ահա այդ ժամանակ միայն ինձ մօտենում է ու. սպան և յայտնում, որ ինձ չի կարող թոյլ տալ սար բարձրանալ, քանի որ ճանապարհորդների ընդհանուր ցուցակի մէջ

իմ անունը չկայ: Իմ և բոլորի տրամադրութիւնը աւրուեց, շատ ծանր և դաւ դժուար հետ բանակցելը: Նա չէր համաձայնուում իւր իշխանութեամբ ինձ արտօնութիւն տալու: որեւիցէ քայլ անելու դժուարանում էին նաև նախնադասի ներկայացուցիչը և պրիւատաւը: Ի վերջոյ ևս այսպիսի մի ևլք առաջարկեցի. պարոն սպան ժամէժամ սպասում էր Ղափարչուից փոստ ստանալու: Նամակներէ մէջ հաւանորէն կլինէր նաև իմ թոշուութիւնը ի պատասխան իմ հետադրի. իմ առաջարկն էր. եթէ իմ հետադրի պատասխանը մերժողական լինի, իմ հաշուով խնդրեցի սպային մի քուրդ վարձել և ուղարկել յետեիցս, իսկ ևս խոստանում էի անպատճառ կէս ճանապարհից վերադառնալ:

Պ. սպան վերջապէս համաձայնուեց և ինձ աղատեց այն ծանր և նուաստացուցիչ դրութիւնից, որի մէջ գտնւում էի, շնորհիւ սահմանային կարգերի անձանցի լինելու: Գերմանացիք իրենց կողմից ջերմ շնորհակալութեամբ վարձատրեցին ձևապաշտ սպային:

Այդ միջնորդէպը ամենքիցս խլեց մօտ կէս ժամ, իսկ ինձ զրկեց թէյ և հաց ուտելու հնարաւորութիւնից, մանաւանդ թէյից, որը շատ շուտ խիտ զգալի դարձաւ, անջրդի տեղերում տաք արևի տակ քայլելու ժամանակ:

ԺԱ.

Բոլոր ճանապարհորդները, պահականոցի մէջ և դամ անձինք և մի քանի քրդեր դառն առաջ կանգնած մեղ ճանապարհ գցեցին բարեմաղթութիւններով: Նոցանից մի քանիսը լեռ բարձրացողներին նկարեցին: Ուրախ և ոգևորւած ճանապարհ ընկանք ուղիղ ժամի 4-ին: Լեռնային արեգակը դեռ կանգնած էր երկնքի վրայ բաւական բարձր և ընկնում էր մեր երեսներին, որովհետև Սարգար Բուլաղից ընթանում էինք դէպի արևմտահիւսիս:

Ճանապարհը լեռնադաշտի սովորական պատկեր ունի, խոտով ծածկուած երբեմն փոքր և մեծ, ոչ այնքան թիւք, զառիվայրեր, որոնք աստիճաններով յաջորդում են իրար. շարունակ վերե բարձրանալով: Միայն երկու տեղ, երկու ձորակներ, դարնանային հեղեղատներ, կտրում էին մեր զառիվայրերը: Այդ տարածութիւնը, որ քայլելու համար մօտ երկու ժամ տևեց, կարելի էր և ձիով անցնել: Մեզնից իւրաքանչիւրը մէջքին կապած ունէր իւր անհրաժեշտ ծանրութիւնը և ձեռին բռնած ալպեան ձեռնափայտը: Իմ ձեռին մի սովորական փայտ էր ծայրին երկաթ հագցրած, մէջքիս կապել էի մի սլէղ, երկու ֆուֆայկա, մի զոյգ բրդի գուլբա, մի արկղիկ սարդինկա, 3 լոշ հաց և մի կտոր պանիր: Մի չիչ կոնեակ երկուսիս համար, մի փոքր թէյ ու շաքար վերցրել էր պ. Սենեքերիմը:

Որոշուած էր քայլել հանդարտ. խրաքանչիւր ժամից յետոյ 5 րոպէ դադար առնել և ով թուլանայ և զգայ իւր անկարողութիւնը, ինքը պիտի մտածէր իւր մասին: Ամենից առաջ պնտւած էր քուրդ Ախմէտ բէգը, իւր հետ ունենալով մի քուրդ բնանակիր: Նա կամեցել էր իւր կարեորութիւնը դրանով արտայայտել և հաւանական իւր բէկական զիրքը ստիպուած էր ունենալ իւր բնանակիրը:

Երկրորդ դադարը շատած ու. Սենեքերիմը կանգ առաւ և յայտնեց, թէ զգում է սրտի սաստիկ բարախումբ, ուստի անկարող է շարունակել ճանապարհը: Նա առաջինը վերադարձաւ, իւր հետ տանելով իմ բաժին պաշարը:

Արեւը վառուած էր երեսս անհաճոյ կերպով, մանաւանդ շափաղանց նեղուած էի ծարաւից, բոլոր ուղեկիցներս կողքերին կախած ունէին ջրի սրուակներ, բայց ամաչում էի ջուր խնդրելու: Նոցանից մէկը ինձ մի քանի թթուաշ կանֆեաներ տուաւ: Բայց այդ օգնեց միայն ժամանակաւորապէս, ի վերջոյ ստիպուած մէկից ջուր խնդրեցի և փոքրիկ բաժակով զովացրի կոկորդս:

Մութը վրայ հասաւ և մենք դեռ քայլում էինք հասնելու այն կայանը, ուր ջուր, մեծ քարերով պաշտպանուած տեղ կայ և ուր մենք պիտի գիշերէինք: Ըննապարհը սկսել էր աւելի դառիվայր դառնալ, միևնոյն ժամանակ քարքարոտ և դժուարանցանելի էր: Մարաւը սկսեց շափաղանց նեղել ինձ, գլուխս պտոյտ եկաւ և զգացի որ անկարող եմ շարունակել: Իսկոյն ինձ օգնութեան հասան, նախ ջուր տուին խմելու և ապա երկու հոգի չվեցարիացի ֆրանսիացիներ ինձնից առան իմ շալակը և երկուսի բաժանելով, բարձեցին իրենց ուսերի վրայ: Բարերախտաբար գիշերելու տեղը հեռու չէր, ջուրն ու շալակիս թեթեանալը ինձ կորով ներս չընչեցին և ժամի 9-ի մօտերքը արդէն հանգստեան տեղումն էինք:

Միւս ընկերներից և ոչ մէկը չէր ցոյց տալիս թուլութեան նշան:

Աքանչելի գիշեր էր, մաքուր լեռնային օդը շնչում էինք ազահութեամբ: Երբեմն շատ թեթեւ քամին մեր խոնջացած անդամներին էր դարկում մերձակայ ձեան զովութիւնը: Մեր դադարման տեղը մի փոքրիկ հարթութիւն էր, մեծամեծ քարերով շրջափակուած, մեր գէժ յանդիման մի մեծ ձիւնադաշտ, որ անհամար աստղերի լուսով սպիտակին էր տալիս: Մի քանի քայլ մեզնից հեռու հոսում էր ձեան հալուած սառը ջուրը: Տասնևութ հոգի ճանապարհորդները բաժանուեցին փոքրիկ խմբերի, մեծ մասը հետներն ունէին սպիրտի լամպաներ, ոմանք սկսեցին թէյ, միւսները չոկոլատեփել և ընթրիքի պատրաստութիւն տեսնել: Ընթրիքը կազմուած էր մի մի բաժակ թէյ, մի քանի բիսկիտ, գալբաս, սարգինկա և նման իրեր: Բոլորը շտապում էին արագ վերջացնել և պառկել քնելու:

Առաջի բողոքների հաճելի արամադրութիւնը սկսեց փոխուել, լեռնային սառը օդը դնալով աւելի զգալի էր դառնում, ով ինչ տաք բան ունէր հագաւ, ծածկուեց իւր ունեցած վերմակով, եափուանջով, պլեդով, քսակով ևն և պառկեց աւազատ, սառը գետնի վրայ: Մեծ մասը շատ շուտով անոյշ քնի մէջ էր:

Իմ վիճակը բաւական սղբալի էր, երեք գիշեր էր համարեա թէ չէի քնել, անշափ յոգնածութիւնից ամենեկին կորցրել էի ուտելու ախորժակս, այդ երեկոյեան պատահած զլխի պտոյտը ինձ մտահոգութիւն էր պատճառում, երբ մտածում էի, թէ Արարաւ բարձրանալու համար կեանքումս հազիւ թէ կրկին այդպիսի առիթ պատահի: Վախենում էի չկարողանալ բարձրանալ լեռը և այդ կհամարէի մի առանձին գոբախտութիւն: Յուրաք դնալով սառուկանում էր, լաւ էր, որ քամի չկար, եթէ ոչ այդքան թեթեւ պատրաստութեամբ շատ դժուար կացութեան մէջ պիտի լինէի: Շփեցարացիք հեռները բերել էին վրաններ և այլ յարմարութիւններ, և հասցրել մինչև Սարգար Բուլաղ, բայց գոբախտարար ոչինչ չվերցրին հեռները: Սառ հողի վրայ անընդհատ պտոյտներ էի կատարում և օրտանց նախանձում այն անձանց, որոնք այնպէս անոյշ քնել էին:

Դեռ ևս Սարգար Բուլաղում պայմանաւորուել էին, որ դնացողները երկու խմբի պիտի բաժանուին, առաջի խումբը գիշերելու տեղից հանապարհ պիտի ընկնէր գիշերուայ ժամի 1-ին, միւսները 3 ժամ յետոյ: Առաջիները կարծում էին, որ երկրորդները միայն մինչև լեռան օրոշ մասը կբարձրանան, առանց դադաթին հասնելու: Սկզբում կարծում էի, թէ ես ևս կմիանամ առաջին խմբին, բայց փորձով համոզուեցի, որ իմ տեղը երկրորդների մէջ է:

Ժամի 12-ի մօտերքը այլևս անկարող պատկած մնալու, պլեդով, բաշուղով, փոքրիկ քուրքով և զոյգ ֆուֆայկայով փաթաթուած շրջում էի, երբ առաջի խմբի մարդիկը, թուով ինն հողի տեղերից բարձրացան և արթնացրին իրենց ընկերներին: Նոքա արագութեամբ սկսեցին թէյ պատրաստել, դարձեալ մի փոքր բան ուտել և ուղիղ մէկին կազմ ու պատրաստ էին: Նոքա օրոշել էին առաջ ընթանալ առանց առաջնորդի, քուրդը մնում էր մեզ հետ դնալու: Նոքա իրենց աղմուկով արթնացրին նաև մեր խմբի անդամներին: Ես դոցա առաջարկեցի փոխանակ երեք ժամ այդ սառնամանիքում սպասելու, անմիջապէս հանապարհ ընկնել և հանապարհին աւելի երկար միջոցներով դադար առնել:

Մեր խմբի ղեկավարը 65 տարեկան պ. Զելիգն էր, նա իւր քայլերու ընդունակութեամբ առաջիներին կարգին էր պատկանում, միայն օրոշել էր մեզ հետ մնալու, օրպէսզի իւր օրինակով և խրախոյսով մեզ էլ հասցնի ցանկացած նպատակի: Մենք հանապարհ

ընկանք մի ժամ յետոյ:

Պ. Զելիգը մեզ կարդաւորեց այսպէս. առաջից գնում էր քուրդը իւր բեռնակրի հետ, նրանից յետոյ ես, ապա օրիորդ Հայկանդուխար, ապա միւսները և վերջում ինքը պ. Զելիգը: Մենք ես ինն հոգի էինք, չհաշուած երկու քրդերին:

Լուսնակ գիշեր էր, օդը ցուրտ, թեթե քամին փչում էր շատ սակաւ անդամ: Մեր շուրջը բնութեան մէջ տիրում էր կատարեալ խաղաղութիւն: Կարգադրուած էր քիչ խօսել, ընթանալ հանդարտ և աշխատել միշտ համընթաց մնալ իւր առաջից գնացողին: Խօսելը յոգնեցնում է:

Ճանապարհ այլ ես չկար. դրա փոխարէն 60—70 աստիճանի թեք մակերեսով էր ահուկի քարակարկառով լցուած, որոնց վրայից անցնում էինք թռչոտելով: Այսպեան կոչիկները և ձեռնափայտը մեծ ծառայութիւն էին անում, սաներս քարերից շէին սահում, բայց անհրաժեշտ էր ամենամեծ զգուշութիւն. այդ սոսկալի քարերի վրայ վայր բնկնել, բաւական թանգ կնատէր ընկնողի համար: Վիթխարի մեծութեամբ քարերը՝ սե գոյնի բազալտ, թրի պէս սուր եզրերով, շատ անգամ փայլուն յղկուած երեսով, իրար վրայ ամբարում, լեռնացած էին: Հազիւ թէ Դանտէն իւր անշտի վառ երևակայութեամբ կարողանար դժօրքում մի այնպիսի ճանապարհ նկարագրել, ինչպիսի պատրաստել են Արարատի լեռան, յաւիտենական ձիւնից յորդացող հեղեղատները և շարունակ բարձրագոյն գագաթից ներքև սահեցող աւազակոյտները:

Մեր քայլած տեղը գտնւում էր միանգամից ի վեր բարձրացող գագաթի ստորատում, որ ներկայացնելով գոգաւոր սարադաշտ, իւր մէջ ընդունել և տեղաւորել է գագաթի շափաղանց զառիվայր փեշերից սոսկալի թափով ներքև գլորւող վիթխարի ժայռերը:

Քայլում էինք լուռ և իւրաքանչիւրը իւր ուշադրութիւնը կենդրոնացրել էր իւր քայլուածքի վրայ, որ վտանգաւոր և անզգոյշ քայլ չանի. յաճախ լսւում էր պ. Զելիգի ձայնը—*langsam*—հանդարտ: Ես քայլում էի մեծ աշխոյժութեամբ, կարծես մոռացած մի քանի ժամ առաջուայ յոգնածութիւնը: Քարակարկառից յետոյ գտնւում է մի փոքր հարթ տարածութիւն, որտեղով հոսում է հալւող ձեռն վտակը: Ճանապարհորդները երբեմն այդտեղ են գիշերում: Այդտեղ ժայռերի վրայ կարմիր ներկով գրուած կան այլ և այլ անուններ, որ նկատեցինք գագաթից ներքև իջնելիս, սակայն շափաղանց յոգնած և ստիպուած այնու ամենայնիւ արագ ընթանալ, անկարող էինք կարդալու: Մի քանի հոգի խմեցին այդ ջրիցը. պ. Զելիգը իւր զգուշացնող ձայնը ուշ լսելի կացրեց: Նրա փորձուած կարծիքով լեռ բարձրալիս չի կարելի սառցաջուր խմել, շատերի վրայ ազդում է և սիրտ է խառնում, մի տեսակ ծովային հիւան-

դաժիւնից քանուածի պէտ Դժբախտաբար չուտով կատարուեց նրա
գուշակութիւնը. որ, Հայկանդուխտը կէս ժամ անց ստացաւ այդ
հիւանդութիւնը և ստիպուած յետ ընկաւ: Բայց նախ քան այդ,
մեր ընկերներէից երկուսն էլ թուլացան և խնդրում էին իրենց այդ-
տեղ թողնել:

Այդ առաջի հարուածն էր. երեք հոգի մեր ընկերներէից յետ
մնացին. նոցա մօտ մենք թողինք քուրդ բնակարան և վեց հոգով,
եօթներորդը քուրդ բէկը շարունակեցինք մեր ճամադարհը: Արդէն
հասել էինք բուն դադաթի ստորոտը. վերջանում էին կիսադառի-
վայր տեղերը և լեռը իւր ահակի մեծութեամբ ու բարձրութեամբ
սեպանում էր մեր առաջ: Այդտեղ, համարեա ուղիղ դէպի արևելք
դարձած, ձգուած է մի վիթխարի լեռնաանո, որ հասնում է մինչև
դադաթը. իսկ նրա աջ և ձախ կողմերում ընկած են երկու գոգա-
ւոր դաշտեր, որոնց մէջ լիքն է ձիւնով. մինչդեռ առաջին լեռնա-
անոի վրայ և ոչ մի տեղ ձիւն չկայ: Այդ ձևան դաշտերը աւելի
զառիվայր են, թէև դադաճեռական ձևով են ընկած, օրովհետև
ձևան ահագին չերար ծածկել է բոլոր խորթ ու փորթ և անյարթ
մասերը: Նոքա աչքի տեսողութեան համար երևում են ուղիղ դէպի
վեր յցուած և կոնասներ տարբեր պատկեր ունի: Նա ի է ամենա-
տեսակ անհարթութիւններով. նրա վրայ երբեմն ծառանում են բա-
ղալախ սեպացած բարձր ժայռեր, երբեմն աւազախառն, մանր և
խոշոր քարերով լցուած լեռնադաշտեր, իսկ ամենաբարձր մասում,
դադաթին մօտ բարձրացող աւազադաշախ մէջ լիքն է ծծմբային
հանքը. իւր անտանելի դարչահոտութեամբ:

ԺԲ.

Հասել էինք դադաթի ստորոտը. դեռ եւ մեր ճամադարհը լու-
սաւորողը լուսինն էր. ազօտ կերպով արևելքից շողեր էին նկատու-
ում. երկինքը մաքուր էր և տալձառ, զարդարուած բազմաթիւ
աստղերով: Քամի դարձեալ չկար: Օրը խոստանում էր հրաշալի
լինել. Առաջ ընթացող վեց հոգիքս ատերևոյթ դեռ եւ թարմ էինք.
ամեն մէկը շարքի մէջ ճշտութեամբ պահում էր մի անդամ դրաւած
տեղը: Ասկայն լեռան դառիվայրութիւնը, անկասկած նաև օդի նօս-
ութիւնը սկսել էին զգալ առ իրենց: Արդէն 4000 մետր ծովի
մակերևոյթից բարձր էինք. ասել է հասել էինք Արադածի դադաթ-
ների բարձրութեան: Փամի առաւօտեան 5-ն էր, մնում էր բարձ-
րանալու ընդամենը 1000 մետր, կամ մօտաւորապէս մի վերստ
շատ չնչին տարածութիւնը. սրը եւ անցայ 3 ժամում:

Գնալով երկինքը շառագունում էր, աստղերը անհետանում
էին, նուազում էր լուսնի լոյսը: Քրդի վկայութեամբ հետո չէր այն

տեղը, որտեղ սովորաբար ճանապարհորդները սար բարձրանալիս
երկրորդ գիշերն են հանգստանում: Մենք որոշեցինք հասնել այնտեղ
և կէս ժամ դադար առնել: Վաղուց աչքից փախցրել էինք մեր յետ
մնացած ընկերներին, իսկ առաջախաղացները երեւի շատ էին առաջ:
Երկինքը բոլորովին պայծառացաւ, առաջից դնացող քուրդը մի
փոքրիկ հարթութեան վրայ պառկեց — նա հանգստեան կայանն էր
հասել, փոքր սա փոքր մենք էլ տեղ հասանք, շարքի մէջ եւ երկ-
րորդից ընկել էի շորրորդ տեղը: Կարծես արեւ մեզ էր սպասում,
մեր նստած րոպէին, նրա ճառագայթները սակեղօծեցին փոքր Արա-
բաթի գագաթը: Նա իւր ամբողջութեամբ գեղեցիկ կոնուսով, գլուխը
կտարած, կանգնած էր մեր դէմ յանդիման: Ընդարձակուել էր մեր
հորիզոնը դէպի հարաւ-արեւելք, դէպի Արաքսի հովիտը, Գեղար-
քունեաց և Սիւնեաց լեռները, դէպի Տաճկահայաստանը, իսկ դէպի
Պարսկահայաստանը դեռ եւ լայնարձակ տեսարան շկար: Բարձր
բլուրներ, մանաւանդ փոքր Մասիսը փակոււմ էին մեր առաջը:

Պ. Զեյիզը ի խրախոյս մեր աշխատանքի բաց արեց մի արկղիկ
կեռասի կոնսերվ և սկսեց եօթ հաւասար բաժիններով մեզ հիւրա-
սիրել: Նա մեզ թոյլ տուեց ամբողջ կէս ժամ հանգստանալ, մինչեւ
այդ մենք հանգստանում էինք 5—10 րոպէ: Քայլելու ժամանակ
մենք մի մեծ յարմարութիւն ունէինք, արեւ քոյսը ժամանակ մեր
մէջքին էր ընկնում, որովհետեւ մենք բարձրանում էինք հաճախ
արեւելքից դէպի արեւմուտք: Քուրդը այդտեղ քարերի տակ ծածկեց
խոր հրացանը, նա ապահով էր, որ մենք այլ եւ ոչ մի փառնդի չենք
ենթարկուիլ: Փոքր Մասիսի յետեից արեւը բոլորովին դուրս եկաւ
և արագութեամբ լուսաւորեց արար աշխարհ: Այլ եւ շատ ճանա-
պարհ չէր մնում, միայն 1000 մետր, ժամի 6-ն էր, կարող էինք
գագաթին հասնել ժամի 10-ին: Մեր հաշիւը սխալ դուրս եկաւ,
Գնալով ճանապարհը աւելի էր մօտենում ուղղահայեացին: Այդ-
տեղից սկսած, թէեւ ջանք ու հիւզ դործ գրի առաջին կարգում մնալ,
բայց գնալով թուլանում էի, եւ մշտապէս անցայ հինգերորդ տեղը,
վեցերորդը և վերջինը սր, Սառմալան էր, Սմատերդամից, նա էր իմ
նեցուկը, որովհետեւ գիտէի, որ եւ վերջինը չեմ:

Ճանապարհը ընդհանրապէս, գագաթի ստորոտից սկսած մինչեւ
գլուխը, կարելի է օւղղակի հեշտ համարել, ընթանում էինք բոլոր
ժամանակ չոր տարածութեամբ, աջ և ձախ տարածուած են վիթ-
խարի ձեան դաշտեր, և մենք քայլում էինք բոլորովին չոր գետնի
վրայ: Ոչ մի տեղ չեն հանդիպում խոշոր դժուար անցանակի ժայռեր
և ոչ նեղ, անդունդ նայող, սարսուռ աղբոջ կիրճեր, ոչ մի անդամ
չէինք հանդիպում խորխորատների և վիհերի, ոչ էլ այնպիսի տեղերի,
որ երկխաղից աղիքներից գալարուին: Միակ դժուար տեղերը աւա-
ղուաներն են, որի վրայ քայլելիս, ոտներդ սահում է և չափա-

զանց արագ յոգնածութիւն էր զգում, այդ անհանդութիւնից ազատուելու համար աշխատում էի աւաղուտի մէջ տնտեսած մեծ քարերի վրայով քայլել: Ես մի երկու անգամ էլ անցայ ձեան վրայով: Այդ հնարաւոր էր միայն առաւօտը, երբ ձիւնը սառած ամուր էր և վայտի և երկաթի դամերով կոշիկների հոտհիւ, մի թեթեւ էլ զգուշութիւն և ապահով էի գլխիվայր ներքե գլորուելուց:

Ժամի 9-ն էր, տակաւին կէտ նպատակից շատ էինք հեռու, պրոֆեսոր Ստամոսը և ես շարունակ ուշանում էինք, ու Զելիգը չէր կամենում մեզ երեսի վրայ ձգել, նա շարունակ խրախուսում էր և յորդորում միշտ գէպի վեր բարձրանալ: Նա բաժանեց կեռասի երկրորդ արկղիկը, բայց ինձ առաջարկած բիսկիտները չկարողացայ ուտել, ախորժակս բոլորովին կորել էր: Բարերախտաբար ծարաւից էլ չէի նեղւում, որովհետեւ ձեան աշխարհումն էինք, բայց ջուր չկար:

Ամառնորդամցի պրոֆեսորը յայտարարեց, որ այլ ես անգոր է, ոյժերը սպառել են և առաջ գնալ չի կարող: Ես ևս նրանից շատ հեռու չէի, բայց յետ մնալու մասին չէի մտածում: Ես որոշել էի գազաթ բարձրանալ և գիտէի, որ երկրորդ անգամ կհանգումս շեմ ունենալու ոչ այդպիսի ընկերակցութիւն և ոչ էլ այդքան յարմար և բարեյաջող եղանակ: Տեսնելով ճանապարհի յարմարութիւնները աւելի էի համոզւում, որ այդ գազաթը բարձրանալը դիւրին է, անհրաժեշտ է լաւ կուրծք, մի փոքր աւելի երկար ժամանակ առօրական ընկերակիցներ, իսկ իմ ընկերները չվեցարիացի աղինիստներ էին: Սուրբ լսել թէ կարողացել էին, որ մի անդդիացի մի օրուայ մէջ Արարատ է բարձրացել և իջել, կամենում էին նոյնը կատարել: Այդ գազափարով էին ոգևորւած առաջի խմբի անդամները, մեր խումբը կամայ անկամայ պիտի հետևէր նոցա:

Ժամի 9-ից սկսած ես էի խմբի վերջի անդամը, իսկ առաջի կէսից ես մենակ էի մնացել, ընկերներս ընդառաջեցին, այդտեղից սկսուեցին իմ հոգեկան և ֆիզիքական տանջանքները: Բաւական արագացել էր սրտիս բաբախումը, յաճախ գլուխս պտոյտ էր գալիս և որոշ անհաճոյ մտքեր պաշարում էին ինձ: Մտաբերում էի թէ ինչպիսի սրախութեամբ էջմիածնից գիշերը ճանապարհուեցի Ղաւարլու, հասնելու, որքան պերճախօսութիւն և աղաչանք դորձ գրինք Սարգար Բուլաղի սպային համոզելու թողաւութիւն ստանալու համար, մտաբերում էի որքան կասկած և թերահաւատութիւն կայ լեռան գազաթը բարձրացողների նկատմամբ և գլխիկոր, ամօթով պիտի վանք վերադառնամ միաբանակիցներին յայտնեմ, թէ կէտ ճանապարհից վերադարձայ: Անկախ այդ բոլորից մտածում էի, միթէ ես իրաւամբ պէտք է զրկուեմ այն հաճոյքից, որին հասել են եւրօպացիներ և սուսներ:

ԺԳ.

Դեռ երկար ժամանակ ես տեսնում էի իմ ընկերակիցներին, որոնք երբեմն հալօ բացականչելով, հրաւիրում էին իրենց հասնելու ժամի 10-ից նոքա անհետացան և ես մեն մենակ էի, մեռած, լուս քնութեան մէջ. կենդանութեան և բուսականութեան և ոչ մի հետք. Արարատի վրայ 4000 մետրից բարձր ոչ մի բոյս չի բուսում, միջատների և ոչ մի հետք, միակ կենդանի էակը, որ համարձակւում է այդքան բարձր սլանալ արծիւն էր, որին ես տեսայ իմ ընկերների գլխին սաւառնելիս, երբ նոքա դեռ ես աչքիցս չէին անհետացել:

Այդ մենակութեան մէջ՝ ինքս ինձ թողնում, ես գլխումս մի յամառ միտք ունէի՝ միշտ առաջ ընթանալ. Արադամի դադաթը բարձրանալիս ես փորձով դիտէի, որ պէտք է աշխատել շատել յողնածութիւնը առնելու համար, որովհետեւ նստելուց մարդու մարմինը չափազանց թուլանում է, մի տեսակ նիհր է դալիս մարդու վրայ և այլ ես անկարող է դառնում լեռ բարձրանալը. ես համարում էի իմ քայլերը, աչքով հաշի առնում անցնելիք տարածութիւնը, ուրիշ միտք սակաւ էր գլուխս դալիս: Յաջորդաբար ամենաշատը կարողանում էի միանդամից միայն մինչև վեց քայլ կատարել. իսկ սովորաբար երեք քայլից յետոյ առիպւած էի լինում յենուել ձեռնափայտիս վրայ և հանգստանալ: Սարի դադաթը հասայ ժամի 2-ին, տակ է 5 ժամ ընթանում էի առանց որ և է տեղ նստելու: Երկար ժամանակ անորոշ դրութեան մէջ էի, չգիտէի թէ որքան տարածութիւն կայ առաջս, մի քանի ակզ վիթխարի բարձրութեան և մեծութեան ժայռեր փակւում էին առաջս, մի բան միայն պարզ էր, որ դեռ հեռու է դադաթը:

Իմ ամենամեծ սերախութիւնը եղաւ, երբ նկատեցի, որ երկինքը կը որանում է, թեքւում է կիսաշրջանաձև առաջս ընկած տարածութեան գլխին. տակ է տեսածս ամենաբարձր դադաթն է, որի շուրջը շրջան է կազմում երկինքը:

Հենց այդ ժամանակ լսեցի ձայներ, ժամի 11-ն էր, կարծում էի թէ ընկերներս են ինձ սպասում, բայց չէ, դոքա առաջի խմբի մարդիկն էին, որ նորատակին հասած ներքե էին իջնում: Ամենից առաջ տեսայ շվեցարիացի ուսանող էրիսմանին արշաւախմբի ամենաընտիր աշակինիատին: Նա երեսուն հինգ ֆնա, ծանրութիւն չալակն առած էր ճանապարհ ընկել Սարդար Բուլաղից, առաջինն էր բարձրացել լեռան դադաթը և այժմ մեն մենակ ներքե էր սահում ուղղահայեացին մօտ ձեան դաշտի վրայով: Նոքա ընկերներից և ոչ մէկը չէր յանդգնել նորան հետեւելու, նոքա իջնում էին

չոր ճանապարհով և ձեան դաշտը անցան այն ժամանակ միայն, երբ նա այլ ևս այնքան թեք չէր: Չափազանց զեզնցիկ և վեհ էր այդ երիտասարդի խիզախութիւնը, կապուած հոգեկան երկիւղի և ոգեւորութեան հետ: Նա իմ ձայնը լսելով, դարձաւ դէպի իմ կողմը, մի փոքր մօտեցաւ ինձ և յայտնեց, որ իրենք արդէն վերադառնում են, իսկ իմ ընկերները շարունակում են բարձրանալ:

Նուտով երեացին և միւս 8 հոգիքը, որ բացականչութիւններով և ուռաներով գիմաւորեցին ինձ: Սրտանց նախանձում էի նոցա: Նոցանից իմացայ, որ տարածութիւն չատ չէ մնացել. $\frac{1}{2}$ ժամ ասում էր մէկը, մի ժամ կրկնում էր միւսը: Խրուսուսում էին, որ այլ ևս դժուարութիւն չկայ, որ անպատճառ կհասնեն: Նոքա ինձ հոգի ներշնչեցին, գլխաւորապէս նրանով, որ յայտնեցին, թէ իմ ընկերները գիտեն իմ գնալու մասին և ինձ լստան գազաթին կապասեն:

Նոքա հետադան, ևս մնացի դարձեալ մենակ, յոգնած, ուժասպառ, յամառ համոզմամբ թէ պէտք է գլուխ ելնել: Սկսեց գլուխս պտոյտ դալ, սիրտս խառնում էր, երբ մի կամ երկու քայլ էի անում կամ գլուխս մի փոքր շարժում էի, կարծում էի թէ ուշագնաց զետին պիտի գլորուեմ: Վերջապէս հասայ այնտեղ, որտեղից պարզ երևում էր գազաթը և որտեղից տեսայ իմ ընկերներին: Նորանցից մի երկուսը արդէն գազաթին էին, անկարող էի ճշտութեամբ որոշել, արդեօք նոքա առաջ են ընթանում, թէ վերադառնում են: Չայն բարձրացնելով սկսեցի բղաւել և խնդրել, որ չիջնեն, սպասեն իմ հասնելուն: Բայց ոչ, իմ տեսած երկու հոգիքը քուրդն էր և ալ, Զելիգը, որ առաջինը հասան գազաթը: Ժամի ուղիղ $\frac{1}{2}$ -ն էր: Մեզ բաժանում էր 150 սաժէն տարածութիւն: Գերմարդկային ճիգեր գործ գնելով քարշ էի գալիս, աչքերս յառած դէպի գազաթը և այն երեք ընկերներին, որ ինձ պէս յոգնած և ուժասպառ, վերջի մասը բարձրանում էին չափազանց դանդաղ:

Այդ շնչին տարածութիւնը այնքան էլ թեք չէ, բայց նա կրկին անյարմարութիւն ունի, աւազոտ է և մօտ լինելով ձմեռային հանքերով հարուստ գազաթներին, դարչնիի հոտ է բուրում, որ չափազանց վատ է ազդում յոգնածութիւնից ներառած նեարդերի վրայ: Աչքերս ջրերով լցուեցին և դժուարանում էի շունչս քաշելու: Ի վերջոյ այնքան մօտեցայ գազաթին, որ լսում էի ընկերներին բացականչութիւնները և խրախուսալից խօսքերը:

ԺԴ.

Ժամի 2-ին հասայ գազաթը:

Այդտեղ ինձ սպասահեց այն, ինչ որ ամենից քիչ էի սպասում.

երբ ոտս դրի այն տարածութեան վրայ, որտեղից սքանչացած աշ-
քերիս առաջ բացուեց Հայկական և Քրիստոնէական սրբազան լե-
ռան բարձրարևոճ կատարը, կոկորդս սկսուեց կցկուել. ճիգ թա-
փեցի ինձ դասել, զգացմունքներս չափազանց բռնն էին. ամբողջ
մարմնով փռուեցի ձեան դաշտի վրայ և փարուելով յաւիտենական
ձեան դաշտին իրբեւ ամենամերձ և ամենամաերիմ մի էակի, սկսեցի
անդուստ արտասուքներով և հեկեկանքով անվերապահ արտայայ-
տութիւն տալ իմ զգացմունքներին: Պ. Զեկիզը և գոկտօր Ֆրէյ ինձ
մօտ էին: Ճիգ էին գործ դնում ինձ հանգստացնելու, դժուար էր
ինձ նորա տուին մի քանի կաթիլ կոնեակ, մի փոքրիկ սրուակի
մէջ պահուած, և սկսեցին հիւրասիրել իրենց միակ հարստութեամբ,
կեռափ կոնակրովով: Բաւական ժամանակ անցաւ, մինչև որ հան-
դրատացայ խեղդող արտասուքներից և լեզու ստացայ խօսելու:
Նորա ինձ առաջարկեցին մի կէս ժամ պառկել հանգստանալ և
ապա ճանապարհ ընկնել:

Արթիկ կարող էի հանգստանալ:

Անմիջապէս սկսեցի պատշաճներ անել լեռան գագաթին. փայ-
լուն, հաստ, դարևոր անարատ ձեան շերտի վրայ, Փշում էր սառը
քամի, բայց ոչ զօրեղ. ձեռներս և ազանջներս սկսեցին սասել-
ստիպուած ծածկուելի և ձեռնացներ հաղայ: Ինձ զգում էի չափա-
զանց թեթեւ, չափազանց ոգևորուած և վերին աստիճանի բարձ-
րացած օրամագրութեամբ: Կեանքիս մէջ ունեցել եմ ուրախ,
բարձր, անմտաց մամենտներ, սակայն այդանդ զգացածս շատ էր
տարբեր և արտասովոր: Զգում էի որ թևեր առած թռչում եմ,
և որ թռել հասել եմ ամենարարձր կէտին: Շնչում էի թեթևու-
թեամբ, կրծքիս վրայ որ և է ծանրութիւն չկար. մտապել էի յոգ-
նածութիւնը, օդի նստրութիւնը ինձ համար միանգամայն աննկա-
տելի էր. գուցէ իրբեւ լեռնոտ երկրի ծնունդ, թեթևութեամբ էի
կրում այդ տարբերութիւնը:

Շատապ և զգոյշ քայլերով հասայ գագաթի այն մասը, որ
նայում է դէպի էջմիածնի դաշտը. դէպի Արագած և Արայի լեռ-
ները, այդտեղից աւելի հեռու, դէպի Շիրակ, Կարս և գուցէ մինչև
Ան ծով: Այդ անսահման հորիզոնի մասերը, որ կարող էի երբ և է
տեսնել, 2½ մասովը արդէն տեսել էի լեռ բարձանալիս, մնում էր
չրժանը լրացնել, գագաթի վրայ պատշաճներ անելով:

Գագաթը ներկայացնում է մի քաւական ընդարձակ լեռնա-
դաշտ, ձիու թամբի պէս, մէջը կորնթարթ. երկու կողմերը ու-
ռած, իսկ արեւելահարաւային կողմում բարձրանում է մի բլրակ,
ուռոյցքի պէս: Դա է ամենարարձր կէտը: Դորա տակ չինուած է
փայտեայ մի պահարան, որի մի մասը ձիւնով ծածկուած է. մի
փոքր հեռու, բլրակին աւելի մօտ կանգնեցրած էր սուսական դրօ-

շակը, որի փայտը քամու հարուածներէն փշուր փշուր է եղել, իսկ դրօշակի կտորները փաթաթուել են յիշեալ պահարանին: Յետոյ տեղեկացայ որ փայտեայ պահարանի մէջ պահուած է մի յիշատակարան, ջերմաչափ, ծանրաչափ և որ յիշատակարանի մէջ խրաքանչիւր լեռ բարձրացող արձանագրում է իւր անունը: Ընկերներիցս ոչ ոք այդ չէր իմացել. պահարանը չէին բացել թէ և բաւական ազատ ժամանակ ունէին:

Սարաղաչափ միջի, կորնթարթ մասում ձիւնը հալած և սառած էր, միւս տեղերում ձիւնը գտնուած էր իւր վիճակում, միայն խիստ ամբողջած: Դայլելու ժամանակ գծաւարութիւն էի դրում միայն մէջ տեղով անցնելիս. կարող էի սահել և ընկնել: Գազաթին պտտում էի շատ արագ. շտապում էի ամեն բան տեսնել, բայց հէնց այդ շտապելը, յոգնածութիւնս և յուզմունքս զրկեցին ինձ լայնարձակ հորիզոնի վրայ, հեռաւոր և մերձաւոր կէտերի մէջ մանրամասնութիւններ նշմարել: Մի բան աչքիս զարկաւ. երբ գազաթից դիտում էի փոքր Արարատը և Արագածը, նոքա աչքի տեսողութեան համար, երևում էին չափազանց փոքր: Եւ յիշեցի 1909 թ. ամառուայ իմ վերելքը Արագած լեռը, որի գազաթից Արարատը ոչ միայն չէր փոքրանում, այլ ընդհակառակը չափազանց մեծ և ահուելի էր թւում:

Զկարողացայ նշմարել ոչ կովկասի լեռնաշղթան, ոչ էլ Հայաստանի Նոյատ, Սիփան, Խոյթ. Տաւրոս գազաթները և շղթաները: Ժամանակս կարճ էր. ընկերներս շտապեցնում էին և ես չէի կարողանում անվերջ շահագործել նոցա սիրայօժարութիւնը: Պ. Զելիգը այդտեղ էր, այդ սառը քամու տակ ժամի 12-ից սկսած: Վատն այն էր, որ ընկերներից ոչ մէկը գազաթը բարձրանալուց զատ ուրիշ յատուկ նպատակ չունէր աչքի առաջ: Նոքա նպատակի հասել էին և շտապում էին վերադառնալ:

Ստիպուած էի նոցա կնիքարկուելու:

Շփեցարացիք իրենց հետ ունէին իրենց երկրի դրօշակը. որ ամբողջին պահարանի փայտերի մէջ, ապա նկարեցին մեզ բոլորիս խմբով. դրօշակը մեր գլխին ծածանուելիս, ապա ինձ մենակ:

ԺԵ.

Ժամի երկուսից կէս անց սկսեցինք իջնել: Եւ նորից կուացայ գետին, փրցրի մի փոքրիկ ձեան կտոր և բերանս դրի: Դարձեալ մի ընդհանուր հայեացք, այդ երազական աշխարհին և տեսարաններին վերջի մնաս բարեւ ասացի և շտապով սկսեցինք իջնել ներքև:

Սկզբում իջնելը շատ դիւրին էր թւում, այն աւազոտ ճա-

Նապարհը, որ այնքան դժուարութիւն էր պատճառել, իջնելիս ներկայացնում էր ամենամեծ յարմարութիւն։ Այդտեղով անցնում էինք ոչ թէ քայլելով, այլ ինչպէս ձեան վրայ, ներքե սահելով։ Ասկայն կէս ժամից յետոյ զգացի որ համարեա թէ ուժասպառեմ դառնումս ժամի 10-ից մինչև 3-ը քայլում էի, կամ կանգնելով էի հանգստացել, ոչ մի տեղ չէի նստել, չհաշուած դադարի մի քանի բոլէի դադարը։ Ընկերներիս բացատրեցի իմ ֆիզիքական կացութիւնը և խնդրեցի 10 բոլէ դադար։ Նոքա լսեցին։ Այնուհետև սկսուեց վերադարձը. ալ, Զելիդը այժմ հակառակն էր պընդում schneller, meine Herren—աւելի արագ, պարոններս։ Եւ պէտք է շտապէինք. արեւը արագութեամբ թեքւում էր և ահագին տարածութիւն պիտի անցնէինք մեր գիշերուայ տեղը հասնելու, ուր պահուած էին մեր շորերը և, գուցէ նաև մեր առաջախաղաց ընկերներից թողնուած ուտեստեղէն։

Այլևս չէի զգում ոչ սրտի բարախում, ոչ գլխի պտոյտ, սիրտս ու գլուխս հանդիստ էին, բայց ռաներս ու ձեռներս հրաժարւում էին ծառայելուց, յոգնածութիւնը այնպիսի շափերով էր արտայայտւում, որ կարծում էի թէ ամենից լաւն է լեռնաանոնից անցնեմ հարեան ձիւնադաշտը, և այնտեղից գլորուելով կամ սահելով ներքե հասնեմ։ Բայց մօտիկուց դիտելով նրա զառիվայրութիւնը, սարսափում էի և դարմանում ուսանող էրիւմանի խիզախութեան վրայ։ Ամբողջ եռանդս ի մի հաւաքելով ամեն ջիւղ ու ջանք էի գործ դնում դոնէ ներքե իջնելիս ընկերներինս յետ չմնամ, երկու անգամ անյաջող և բաւական վտանգաւոր փորձեր կատարեցի սահելով դիւրացնել գործս։ Առաջս ընկած էր մի ձոր, լեռնային հեղեղատ, նրա մէջ հաւաքուած էր մեծ քանակութեամբ աւաղ և բաւական խոշոր քարեր։ Մտայ այդ հեղեղատը և որոշ զգուշութեամբ սկսեցի ներքե սահել, յանկարծ լսում եմ ալ, Զելիդի սպառնացող և զղուշացնող ձայնը, որ ինձ հրաւիրում էր շուտ հեռանալ ևս լսեցի և դուրս եկայ ձորից, ուղիղ ժամանակին էր ազնիւ չմեցարիացին ինձ դուրս կանչել, ևս ներքե սահելով շարժման մէջ էի դրել զառիվայր հեղեղատի ամբողջ քարն ու աւաղը, որ մեծադղորդ թափով և մեծ արագութեամբ ներքե էին գլորւում։ Կարելի է երեակայել թէ ինչպիսի հարուածներից և կեանքի վտանգից ազատուցի։ Չափազանց փորձուած աշպինիստի խրատը ուղիղ ժամանակին էր։

Ստիպուած սկսեցի ներքե քայլել սովորական ճանապարհով, բայց նկատում էի, որ գործ դրած ճիւղերս անգօր են, ընկերներս մէկի բացատրութեամբ առաջ են անցնում։ Երկրորդ փորձն արի ձեան վրայ սահելու, սակայն ռոտ հազիւ էի դրել ցերեկուայ բաւական տաք արեգակի ճառագայթներից փխրուն դարձած ձեան վրայ, ռոտ

սահեց, ես վայր ընկայ և սկսեցի ներքև գլորուել: Բարերախտաբար այդ վտանգից էլ ազատուեցի, մի քանի սաժէն գլորուելով մի քարի հանդիպեցի և կանգ առայ: Այդ քարին յենամ, թաց ձեան վրայ, որի տակից հալոցքի ջրերը կրկնալով ներքև էին գլորուում, հինգ բոպէաչափ դադար առայ: Երկուր ժամանակ շարժւում էի առաջ, բայց գնալով հեռանում էր իմ և ընկերներս միջի տարածութիւնը: Իմ վիճակին էր ուսանող Պսելը:

Ի վերջոյ հասայ այնտեղ, երբ ձեան դաշտը այլ ևս այնքան դառիվայր չէր և որոշ զգուշութեամբ հնարաւոր էր անվտանգ ներքև սահել: Անցայ այդ դաշտը, նստեցի ձեան վրայ, մի ոտս ծալած միւսս ոտս յառաջ պարզած, ձեռնափայտով կանոնաւորելով սահումը, այդպէս առաջ ընթացայ համարեա թէ մինչև լեռնագմբէթի տորոտը, ուր վերջանում է նաև ձեան դաշտը: Այդ եղանակով բաւական շուտ հասայ ընկերներս, մինչև անգամ երկու հոգու ընդառաջելով: Այդ ինձ հնարաւորութիւն տուեց գետնի վրայ պառկած հանգստանալ, մինչև նոքա կհասնէին: Հաշւի էի աւնում, որ մի հինգ բոպէ էլ նոքա դադար տալու համար կսպասեն:

Եւ իսկապէս անհրաժեշտ էր շտապել, արեւ արդէն մայր էր մտել, հանգստեան տեղը հասնելու համար պէտք է անցնէինք Դանտէի գմբէթի ճանապարհով, գիշերը եթէ վրայ հասնէր անկարելի էր այդ ժայռերի վրայ անվտանգ մազլցել:

Գիշերուայ ժամի երկուսին, լուսնի լուսով, հանգիստ վիճակում անցնելով այդ ժայռերի վրայով, ինձ ոչ այնքան երկար էր թւալիս և ոչ էլ այնքան ահուկի, իսկ վերադարձին շարունակ ինձ հարց էի տալիս, կարողանալու եմ այդտեղից արդեօք անվտանգ տեղ հասնել: Քայլում էինք լուռ, անձայն, քայլերը յարմարեցրած նախորդ ընկերի քայլերին: Մութը վրայ հասաւ, որ գնալով թանձրանում էր: Առաջից գնում էր քուրդը, որի տրեխները բոլորովին պատառատուել էին և նա Զելիգի աղլուխով և սանափաթաթներով էր պաշտպանում իւր մերկ ոտները: Մութն այնքան սաստկացաւ, որ այլ ևս չէինք տեսնում, շարժւում էինք բնազդմամբ: Ընկերներս ոչ մէկը որ և է լոյս չունէր հետը: Երեք հոգի քրդի հետ առաջ անցան, երեքով յետ մնացինք և ես էի նոցա առաջնորդում: Յանկարձ դէմ ընկանք այնպիսի ժայռերի, որոնց վրայով մազլցելով առաջ անցնել անկարելի էր: Երկար ժամանակ օղնութիւն էինք կանչում մեր ընկերներին, ի վերջոյ լսուեց քրդի ձայնը, որը առանց մօտ գալու և ճանապարհ ցոյց տալու, մեզ հրաւիրում էր գնալ իւր մօտ:

Այդ աւաղակ քուրդը, որ մի օրուայ կէսի համար հարիւր յիսունս ուրլի վարձատրութիւն էր ստացել, իւր պաշտօնը նկատում էր նրանում, որ լաւ քայլողների առաջից գնայ, առանց ու-

շաղրութիւն դարձնելու թուլացածներին և վտանգուածներին վրայ։ Բնական էլ է. նա՝ վարձը ստացել էր իրրեւ հարկ և ոչ թէ ծառայութեան փոխարինութիւն։

Վերջապէս հասանք գիշերելու տեղը. ամեն մէկը որոնեց և գտաւ քարերի տակ պահուած իւր գիշերուայ ծածկոցները. ես էլ որոնեցի խնա, քայց չգտայ. բեռնակիրը քուրդը, ենթադրելով, որ ինչպէս առաջին խումբը, մենք ես նոյն երեկոյեան կհասնենք Սարգար Բուլաղ, կամենալով ինձ ծառայութիւն մատուցանել, իմ շալակը հետն առել տարել էր։

Ընկերներինս մէկի մօտ մի մօմի կտոր դանուեց, որ հագիւ 15 րոպէ վառուեց։ Ուտեստի պաշարի փշրանքներ էին մնացել, երկու տարդիմեկա, մի աման կեռասի կոնսերվ, մի քանի շոր բիսկուիտ։ Ամբողջ օրը համարեա ոչինչ չէի կերել. սակայն ախորժակ էի չունէի. բաւականացայ մի քանի հատ կեռասով։ Ընկերներս փաթաթեցին իրենց շորերում, ես ոչինչ չունէի. բացի այդ շորերս ձեան վրայ սահելուց թացացել էին։ Ի՞նչ պիտի անէի։ Աւաղի մի կոյտի վրայ պառկեցի և շուտով քուն մտայ։ Գիշերը սքանչելի էր. օդը մեղմ և նոյն իսկ տաք. չկար նախընթաց գիշերուայ սառը զեփիւտը։ Լուսինը բացուեց ժամի 11-ին և քուրդը մեզ արթնացրեց, որ շարունակենք ճանապարհներս. նա էլ էր ինձ պէս առանց ծածկոցի մնացել, բեռնակիրը տարել էր նրա ետփունջին։

Յոգնածութիւնը փոքր ինչ անցել էր, իսկ մի երկու ժամուայ քունը կազդուրել անդամներս, բաւական աշխուժութեամբ ճանապարհ ընկանք, նախորոշելով իւրաքանչիւր կէս ժամից յետոյ հինգ րոպէ դադար առնել։ Հետացել էինք ձեան սահմանից և ահուզի զառիվայրերից ու քարաժայռերից։ Տրամադրութիւններս այլ ես չաւ էր. խօսում էինք իրար հետ և տպաւորութիւններ հաղորդում։ Սակայն շուտով համարեա ամենքիս սկսեց տանջել ծարաւը. գիշեր էր, հով, շատ քիչ քան էինք կերել, չնայած դրան ծարաւի պահանջը զնալով մեծանում էր։ Բարձրացել էր լեռնային քամին, որ ձորերի միջով, քարերին զարկելով իւր սուլոցներով և գանաղան ձայներով յիշեցնում էր լեռնային կարկաշատս վտակների դահավիժումը։ Այդ ձորերի մէջ ամեն քայլափոխում թափուած էին հարթ, փայլուն բազալտի ժայռեր, որ լուսնի լոյսը արտացոլելով, կանգնած և հոսող ջրերի տպաւորութիւն էին թողնում ծարաւից տանջւողներին երեակայութեան վրայ։ Եթէ հաստատապէս չիմանայինք, որ անցնում ենք միանգամայն անջրտի տարածութեամբ, քամու և լուսնի առաջ բերած երևոյթներով մենք աղբիւրներ, կանգնած ու դնացկան ջրեր կորոնէինք։

Ժամի 2-ին մօտ էր. լսուեց քրդերի շան հաջոցը. նոցա վրանները Սարգար Բուլաղի դօրաց պահակին շատ մօտ էր։ Վերջապէս

հասել էինք նոյառակի. գիշերապահ գինւորը ճանաչելով մեզ բաղեց զօրանոցը և մենք ներս ընկանք: Զուր, թէյ, խմելու մի բան, բոլորիս պահանջն էր: Երեկոյեան լուսով տեղ հասած ալպինիստները հանգիստ քնած էին. նոցանից մէկն ու միւսը գլուխ բարձրացնելով մեզ ողջունեցին: Զինւորները ներս բերին մի վեղրօ լիքը քրդի մածուն, եռացած սամավար և բորչչ՝ մեր ընկերների հոգածու. թեամբ նախապարտասուած:

Պրիստաւը խնդրեց շուտ պառկել, ժամի հինգին արդէն արթնացած պարտաստ լինել, որովհետեւ 5-ին պիտի հանապարհ ընկնէինք ցերեկուայ ժամի 2-ին Ղամարլու երկաթուղու դնացքին հասնելու, ուր պր. Թիկլին ճանապարհորդակիցների մի մասի հետ տեղ հասած մեզ է սպասում:

Ժ.Զ.

Իրաւ է մեզ արթնացրին ժամի 5-ին, բայց մինչև ձիերը պատրաստելը և ճանապարհ ընկնելը տևեց 3 ժամ: Ինձ մի դժբախտութիւն էր պատահել. իմ ձիի թամքն ու սանձը փոխել էին և մի խայտառակ թամք թողել տեղը: Իսկ վերջում ձիատէրը եկաւ էջմիածին ինձ դանդատուեց, որ իւր ձին իրան չի հասել. որովհետեւ Արալըխի հայ դրագիրը, որին ձին պահ տուի տիրոջը յանձնելու, և որը գտաւ կորած թամքը, գողանալ է տուել ձին: Թամքն է տիրոջը տուել, և ձին կորցրել: Օտարոտի կարգեր:

Ասորդար Բուլաղից մինչև Արալըխ, Թաքալթուի վրայով, թէև կարճ, բայց շատ աւելի վատ է ճանապարհը. մանաւանդ մի որոշ մասը, որ չափազանց աւազոտ է և ձիերը մեծ նեղութեամբ են անցնում: Այդտեղ մեզ նորից կառքեր էին սպասում, բայց ժամանակին անկարող եղանք տեղ հասնելու. Երասխի վրայի պարոմը շատ էր դանդաղ դորձում: Կարելի էր ժամանակին տեղ հասնել, եթէ կառքերը մեզ սպասէին Երասխի ձախ ափին և մենք մինչև դետը ձիով գայինք: Պարոմը մեզ, առանց կառքերի, միանգամից կանցնէր: Գետի ափին կառքերի անցնելուն սպասելով, բոլորս էլ լողացանք Երասխի ջրերում: Խոնջացած Արալըխի շողից, անպիտան և անհանգիստ ձիերից, անքնութիւնից և քաղցից թուլացած ճանապարհորդներին համար Երասխի ջրերը սքանչելի էին: Լայն փռւածքով գետը, իւր չափազանց նուազած ջրերով, ստով մի ափից միւսն անցնելու համար միանգամայն անվտանգ էր դարձել: Գետի բարակ, փոշիանման աւազը չափազանց դիւրեկան էր լողանալու և քայլելու համար: Ես այդ լողանալուն եմ վերադրուի, որ հետեւեալ օրերը մարմնիս մէջ առանձին յոդնածութիւն չէի զգում:

ինչպէս սովորական է ֆիզիքական արտասովոր աշխատանքից յետոյ:

Ղամարլուում մեզ շրջապատեցին մի քանի գիւղացիներ, երկաթուղու նաչալնիկը, ծառայողները, որոնք սրտով մեզ շնորհատրում էին մեր յաջող, անփորձ և անփափաք արշաւանքը: Կայարանի գիմացի հիւրանոցում ճաշ պատուիրեցինք, որի ժամանակ առաջարկուած կենացները օրուայ հերոսներին էին վերաբերում:

Երկաթուղու կայարանի կառավարիչը սիրայօթարութեամբ մեզ մատուցեց մի մեծ ծառայութիւն. նա յատուկ շօղեկառքով ճանապարհորդների սպասող վազոնը ուղարկեց Ուլուխանլու, ուր միանալով Քիֆլիզից Երևան գնացող գնացքի հետ, ժամէ 6-ին հասանք Երևան: Երբէն Լալիսկոպոսը առաջնորդարանում մրդով հիւրասիրեց խմբի մի մասին: Հետեւեալ օրը բոլորը միասին ևկան էջմիածին, ուր ներկայացան ազգիս Վահագնա Հայրապետին, շրջեցին Զուարթնոցի աւերակները, վանքերը, դիակցին թանգարանը և մատենադարանը: Մատենադարանում ևս նոցա հիւրասիրեցի թէյով և մրդով, իսկ ճեմարանում նոցա վանքի կողմից արուեց ճաշկերոյթ: Փոխանակուեցին պատշաճի կենաց բաժակաճառեր, դերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն և հայերէն լեզուներով:

Ճանապարհորդները իրենց ճանապարհորդութիւնից թէ մեզ մօտ և թէ Կովկասի դանազան կողմերում, վերադարձել են միանգամայն գոհ և լաւագոյն յիշողութիւններով իւր Պր. Ռիկկին, նոցա առաջնորդը, ինձ ուղղած երկար նամակով յայտնում է իւր և խմբի շնորհակալութիւնը և իւր ջերմ գոհունակութիւնը:

Ժէ.

Արարատ բարձրացող արշաւախմբի անդամներն էին.

1. Վերներ Ամսլեր, ուսանող Շաֆհաուզէնից, շվեյցարիացի (Amsler Werner):
2. Բալլի Վ. փիլիսոփայութեան դոկտոր, բուսարան, Բերնից (Bally W.):
3. Կրիզոզ դը Կոտեն Ֆրանսուա, քիմիկոս, Յիւրիխից. (Crinsoz de Cottens, François):
4. Կելլեր Ի. Ա. երկրաբան, Լիւցերնից. (Keller I. A.):
5. Կոլլեր Յակոբ, պատտօր Յիւրիխից. (Koller Jak):
6. 7. Երկու եղբայր Էրիսման, ուսանող և պրիվատ դոցենտ, երկուսն էլ Յիւրիխից, մայրը ռուս. լաւ սուսախօս. (Erismann Sergius, Paul):
8. Կոնրադ Ուլրիխ, բժիշկ Յիւրիխից. (Ulrich, Dr. med. Konrad):

9. Սիգգմունդ Մարսէլ, բժիշկ ժեննից: (Sigmund, dr. Marcell):

10. Վոլֆ Ֆոն Սալիս, ուսանող: (Wolf von Salis):

Սորա բոլորը պատկանում էին առաջին խմբին, բոլորն էլ շվեյցարիացի, առաջնակարգ աշակերտներ, լեռ բարձրացան համաքննա ասանց առաջնորդի, գաղաթը հարսան առաւօտեան ժամի 9-ին և երեկոյեան 8-ին հարսան Սարգար Բուլաղ: Սորա մեզ հետ քայլել էին ամսի 19-ին 4 ժամ, հետեւեալ օրը, հաշուած գիշերուայ ժամի 1-ից, 19 ժամ, ընդամենը քայլել էին 23 ժամ Սարգար Բուլաղից լեռան գաղաթը բարձրանալու և իջնելու համար: Աի ժամ հանդատացել էին գաղաթին, աւել ու պակաս չափով ճանապարհին, դնալ գալիս:

Երկրորդ խմբի անդամներն էին

1. Վիլի Բիրբաւում, խմբագիր Յիւրիխում. (Wili Bierbaum):

2. Օր. Հայկանդուխա Զախմախշեան, Բագուից:

3. Պրոֆեսոր Ստոմպս, բուսաբան. (Prof. Stomps):

Այս երեքը լեւնագմբէթի սարգաւից վերադարձան, առաջի երկուսը 4000, վերջինը 4500 մետր բարձրութիւնից:

4. Կառլ Ջելիգ, վաճառական Յիւրիխից, 65 տարեկան. (Carl Seelig):

5. Ֆրէյ բժիշկ Դաւոսից, Շվեյցարիա. (Frey Dr. med):

6. Կուրա Կրաուզէ բժիշկ, Բեռլին. (Dr. Kurt Krause):

7. Հէյնրիխ Պաել, ուսանող Մարբուրգից. (Heinrich Prell):

8. Ռիւբել, բուսաբան Յիւրիխից. (Rübel dr. Phil. d.):

9. Մետրոպ մագիստրոս Կաթսկապոս Տէր-Մովսէսեան:

Մեր խումբը լեռան գաղաթը հասաւ ժամի 2-ին, գիշերելու տեղը վերադարձաւ երեկոյեան ժամի 8-ին, գիշերը ճանապարհ դնաց 11—2, ընդամենը ճանապարհին էինք $4 + 22 + 2 = 28$ ժամ, գիշերելու տեղում աւելորդ հանգստացել էինք մի ժամ վերե բարձրանալիս, 3 ժամ ներքե իջնելիս:

Մետրոպ Կաթսկապոս

Մետրոպ Կաթսկապոսը մի քանի օր առաջ ինքն իր խումբով մեզ հետ միասին գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին: Նա ասաց, որ ինքն իր խումբով գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին:

Մետրոպ Կաթսկապոսը մի քանի օր առաջ ինքն իր խումբով մեզ հետ միասին գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին:

Մետրոպ Կաթսկապոսը մի քանի օր առաջ ինքն իր խումբով մեզ հետ միասին գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին:

Մետրոպ Կաթսկապոսը մի քանի օր առաջ ինքն իր խումբով մեզ հետ միասին գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին:

Մետրոպ Կաթսկապոսը մի քանի օր առաջ ինքն իր խումբով մեզ հետ միասին գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին:

Մետրոպ Կաթսկապոսը մի քանի օր առաջ ինքն իր խումբով մեզ հետ միասին գնացել էր Մարբուրգ քաղաքը, որտեղ նա պատրաստ էր անել մի քանի փոփոխութիւններ իր խումբի կազմին: